հաստատված է
Տ. Գյուրջինյան
30.08.2022թ

Արմավիրի մարզի

Արազափի Թ. Հուրյանի անվան

Միջնակարգ դպրոց

ՊՈԱԿ-ի

2022-2023 ուսումնական տարվա

11-րդ դասարանի ղեկավարի

Աշխատանքային տարեկան ծրագիր

Դասղեկ. Հ. Սարիբեկյան

Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)-11-րդ դասարանում սովորում են 10 աշակերտներ, 4 աղջիկ, և 6 տղա, որոնցից 1-ը ներառական կրթությամբ ուսուցանվող աշակերտ է:ՈՒսման նկատմամբ ունեն դրական վերաբերմունք:Դասարանի աշակերտները ակտիվ են, համերաշխ և համախմբված:Նրանք օգնում են միմյանց ցանկացած հարցում:Ակտիվորեն մասնակցում են համադպրոցական միջոցառումներին, հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

2022-2023 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության աստիճանը , նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

ՈՒստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ:Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ, կազմակերպել ծնողների հետ անհատական զրույցներ:Հետևել աշակերտների հաճախելիությանը և կարգապահությանը:Ստուգել աշակերտների էլեկտրոնային օրագրերը:

Հոգևոր դաստիարակություն

Կազմակերպել ուխտագնացություն որևէ սրբավայր, ծանոթացնել քրիստոնեական ծեսերին և տոներին:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկը մարդու, բնության, արվեստի մեջ տեսնելու ու գնահատելու կարողություններ:Կազմակերպել մշակութային միջոցառումներ, էքսկուրսիաներ, այցելություններ թատրոն, թանգարան,կինո:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Վարել զրույցներ զինվորի հայրենանվեր գործի, հայրենասիրության մասին:Ծանոթացնել մերօրյա հերոսների և նրանց կատարած սխրանքների հետ:

Ֆիզիկական դաստիարակություն

Մշտապես հետևել աշակերտների մասնակցությա նը ֆիզկուլտուրայի դասերի:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել սեր դեպի աշխատանքը, սահմանել հերթապահություն և հետևել դասարանի մաքրությանը, մասնակցել շաբաթօրյակներին:

Բնապահպանական դաստիարակություն

Կարևորել շրջակա միջավայրի պահպանության խնդիրը:Զարգացնել էկոլոգիական վարքը, մասնակից դարձնել բնապահպանական միջոցառումներին, հոգալ շրջակա միջավայրի մասին:

Դպրոց ընտանիք կապը

Կարևորել դպրոց ընտանիք կապը, հաճախակի զրուցել ծնողների հետ : Կազմակերպել էքսկուրսիաներ և հրավիրել նաև ծնողներին մասնակցել:Ներգրավել ծնողներին ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

ՈՒս. շաբաթները	Դասղեկի ժամերի թեմատիկ պլանավորում	Կատարող
1	2022-2023 ուստարվա անելիքների քննարկում	դասղեկ
2	Զրույց. < <Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>	դասղեկ
3	Բանավեճ << Ընկերության և ընկերասիրության մասին>>	դասղեկ,
4	Զրույց <<Հայաստանի այն վայրերը ,որտեղ կուզեի լինել>>	դասղեկ
5	Զրույց << Երբ քեզ շրջապատում են հարազատ մարդիկ>>	դասղեկ
6	Զրույց << ՈՒսուցիչ ,որին ես շնորհակալ եմ>>	դասղեկ
7	Մեկ օր առանց համացանցի	դասղեկ
8	Զրույց << Իմ երազանքներն ու նպատակները>>	դասղեկ
9	Զրույց<< Ծ նողներս ինձ համար, ես ծնողներիս>>	դասղեկ
10	Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը	դասղեկ
11	Կարգապահական հարցերի քննարկում	դասղեկ
12	Զրույց<< Արտագաղթը չարիք է>>	Դասղեկ, պատմ. Ուսուց.
13	Մտքերի փոխանակում << Կարողանում եմ արդյոք սիրել>>	դասղեկ
14	Ամեն ինչ գիտեմ առողջության մասին	
15	Զրույց << Գալիք Ամանորը և սպասվող հույսեր>> թեմայով	դասղեկ
16	Ինչպես հասնել հաջողության>	դասղեկ
17	Զրույց<< Ինչով կարելի է հպարտանալ, խոսելով Հայաստանի մասին>>	Դասղեկ, պատմ. Ուսուցչ.
18	Հայոց եկեղեցու սիրված տոնները	Դասղեկ, եկ. պատմ. ուսուցչ.
19	Զրույց << Նվիրված Մայրենի օրվան և գրքի տոնին >>	Դասղեկ. Հայ. լեզվի ուսուցչ.
20	Զրույց << Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին>>	դասղեկ
21	Զրույց << Արդյոք կարևոր է սեփական կարծիք ունենալը>>	դասղեկ
22	Զրույց << Մայր իմ անուշ ու անգին>>	դասղեկ
23	Զրույց << Իմ կյանքի 17-րդ գարունը>>	դասղեկ
24	Կոնֆլիկտների առաջացման պատճառները և նրանց հաղթահարման ուղիները	դասղեկ
25	Ես պատասխանատու եմ իմ արարքների համար	դասղեկ

26	Դպրոցական օրերի դժվարությունները և ուրախությունները	դասղեկ
27	Զրույց << Սպորտով զբաղվելը նորաձևություն է, թե առողջության գրավական>>	դասղեկ
28	Զրույց Իմ կատարած լավ գործերը	դասղեկ
29	Ամենահետաքրքիր դասն այս ուսումնական տարում	
30	Զրույց << Ինչ յուրահատուկ ընդունակություններ ես բացահայտել քո մեջ այս տարի>>	դասղեկ
31	Զրույց < <Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>	դասղեկ
32	Զրույց Արցախյան հերոսամարտիկները	Դասղեկ, պատմ. ՈՒսուց.
33	Ինչպես եմ պատկերացնում ինձ , դպրոցն ավարտելուց 10 տարի անց	դասղեկ
34	Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիա	դասղեկ

Դասարանական ակտիվ

N	Ազգանուն անուն	Պաշտոնը
1	Մարգարյան Անի	նախագահ
2	Սարիբեկյան Լազր	անդամ
3	Հարությունյան Հրաչյա	անդամ

Դասարանական ակտիվի 2022-2023 ուստարվա աշխատանքային ծրագիր

.Հետևել հաճախումներին

.Կազմակերպել և իրականացնել միջոցառումներ

.Ապահովել աշակերտների ներգրավվածությունը հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին

Ծնողական խորհուրդ

N	Ազգանուն անուն	Պաշտոնը
1	Հովհաննիսյան Լիանա	նախագահ
2	Մովսիսյան Ծաղիկ	անդամ
3	Մարտիրոսյան Թեհմինե	անդամ
4	Տիգրանյան Սոֆյա	անդամ

Ծնողական խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային ծ րագիր

1.Նախորդ ուսումնական տարվա աշխատանքների վերլուծություն:

Նախագահի ընտրություն

2.Զրույց աշակերտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ

3.Կազմակերպել ծնողների կողմից դասալսումներ

4.Արտադասարանական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ապահովվում

Ծնողական ժողովների թեմաներ

1.Ծնողներին ծանոթացնել 2022-2023 ուստարվա ուսումնական գործընթացին:

Ուշադրություն դարձնել աշակերտների վարքագծին և ուսման առաջադիմությանը:

2.Առաջին կիսամյակի արդյունքների քննարկում և երկրորդ կիսամյակի աշխատանքի պլանավորում:

3. Ձեր երեխայի որ դրական և որ բացասական հատկանիշները կարող եք բվարկել, որը կցանկանայիք առաջնահերթ ուղղել ուսուցչի օգնությամբ:

4.Օգնել ծնողներին պատկերացում կազմելու իրենց երեխաների մասնագիտական կողմնորոշման ու արժեքների մասին:Ֆոներին նվիրված միջոցառումների կազմակերպում:

5. Երկրորդ կիսամյակի առաջադիմության արդյունքների քննարկում: Տարեվերջյան էքսկուրսիայի պլանավորում: